# ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Համայնք Վանաձոր

Երկիր: Հայաստանի Հանրապետություն

Հունիս 2020թ.

# 0. Նախաբան

*Վանաձոր համայնքը 2017թ. միացել է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» Եվրոպական Միության նախաձեռնությանը՝ նպատակ ունենալով մշակել և իրագործել համայնքի տնտեսական զարգացման պլանը, որը կնպաստի համայնքում տնտեսության զարգացմանը, որպես համայնքի զարգացման գերակա ուղղություն:*

*Միանալով նախաձեռնությանը ակնկալում եմ դառնալ տեղական մակարդակում տնտեսական զարգացման և աշխատատեղերի ստեղծման ակտիվ նախաձեռնող, ինչպես նաև ապահովել տնտեսական, սոցիալական, մշակութային զարգացման համար հնարավորությունների ստեղծումը, համայնքի բարեկեցության և կենսամակարդակի բարձրացումը:*

*Համոզված եմ, որ համագործակցության արդյունքում կունենանք մի քաղաք, որը կլինի և տնտեսապես զարգացած, և տեղեկատվական տեխնոլոգիաներով հարուստ, և տուրիստական կենտրոն՝ դրանով կերտելով Վանաձորի ապագան:*

*Վանաձոր համայնքի ղեկավար*

*Մամիկոն Ասլանյան*

Պլանի օրինակն ստանալու համար, խնդրում ենք կապ հաստատել.


Անուն՝*Լիլյա Դավթյան*

Պաշտոն՝*Վանաձորի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, ԱԿ և ՏՏ բաժնի պետ*

Հասցե՝ Տ.Մեծի պող. 22

Հեռախոս՝ 077529997

Ֆաքս՝ 0322 22250

Էլ հասցե՝cityvanadzor@gmail.com

Կայք՝ vanadzor.am

# 1. Ամփոփագիր

Վանաձոր համայնքի տնտեսական զարգացման ծրագիրը մշակվել է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը Վանաձոր համայնքի անդամակցության շրջանակում: Ծրագրում ներկայացվում է Վանաձոր համայնքի տնտեսության ներկա վիճակը, համայնքի ուժեղ և թույլ կողմերը, տնտեսության զարգացման հնարավորությունները և սպառնալիքները, ինչպես նաև առաջարկվում են գործողություններ, որոնք կխանգեցնեն համայնքի տնտեսության գերակա ուղղությունների զարգացմանը:

**Համայնքի տեսլականը՝**

Վանաձորը դարձնել զարգացած տնտեսությամբ մանկապատանեկան ճամբարային, տեղեկատվական տեխնոլոգիաների, կրթական, մշակութային և ժամանցային զարգացած ենթակառուցվածքներով, տնտեսապես զարգացած, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ քաղաք:

Այս տեսլականին հասնելու համար համայնքը ծրագրով սահմանել է հիմնական նպատակներ, այն է՝

1. Զբոսաշրջության զարգացում՝ մանկապատանեկան հանգստի հնարավորությունների վերականգնում, պատմական թանգարանի կառուցում, ճոպանուղու կառուցում, լճերի տարածքի արդիականացում, որը կբերի տարեկան մոտ 20 000 զբոսաշրջիկի այց:
2. ՏՏ ոլորտի զարգացում՝ Վանաձորը վերածել տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների տարածաշրջանային և միջազգային կենտրոնի՝ ստեղծելով հնարավորությունների և ծառայությունների այնպիսի զարգացող միջավայր, որը կնպաստի աշխատատեղերի ստեղծմանը, կաջակցի տաղանդավոր երիտասարդներին և ընկերություններին կյանքի կոչել նորարար բիզնես գաղափարներ՝ նպաստելով տարածաշրջանի կայուն զարգացմանը: Նպաստել Վանաձորում տեխնոլոգիական կրթության արդիականացմանը՝ հասցնելով այն ոլորտի ժամանակակից պահանջների մակարդակին և դրանով ստեղծել բարձրակարգ մասնագետների մեծ զանգված: Որպես հետևանք Վանաձոր ներգրավել բարձ տեխնոլոգիաների ոլորտի հայտնի ընկերություններ և հիմնել այդ ընկերությոնների մասնաճյուղեր, ինչպես նաև նորաստեղծ ինժեներական ընկերություններ
3. Թեթև արդյունաբերություն

   Նպաստել համայնքում գործող թեթև արդյունաբերության զարգացմանը, աջակցել փոքր արտադրամասերին: Աջակցել համայնքի ՀԱՊՀ թեթև արդյունաբերության բաժնի և Տարածաշրջանային պետական քոլեջին թեթև արդյունաբերության ոլորտում կրթական և ուսումնական ծրագրեր իրականցնելու գործում: Նոր ձևավորվող արդյունաբերական ձեռնարկություններին աջակցել տարածքների տրամադրմամբ:

# 2. Բովանդակություն


1. Ամփոփագիր
2. Բովանդակություն
3. Աղյուսակների, գծապատկերների և հապավումների ցանկ
4. Պլանի ներածություն
5. Տեղական տնտեսական զարգացման ծրագրի մշակման գործընթացը
6. Տեղական տնտեսության վերլուծություն
7. SWOT վերլուծություն
8. Տեսլական և նպատակներ
9. Գործողությունների պլան
10. Ֆինանսավորման սխեմա
11. Վերահսկողության մեխանիզմներ


# 3. Աղյուսակների, գծապատկերների և հապավումների ցանկ


Աղյուսակ 3.

Աղյուսակ 4.

Աղյուսակ 5.

Աղյուսակ 6.

Աղյուսակ 7.


## Հապավումներ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՀՀՏԶ – համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման

ՔՀԿ – քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ՓՄՁ ԶԱԿ – փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն

SWOT – ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և մարտահրավերներ

ՏՏ – տեղեկատվական տեխնոլոգիաներ

ՀՈԱԿ - համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ

ՏԻՄ – տեղական ինքնակառավարման մարմին

ԵՄ - Եվրոպական միություն

ՏՏԶՊ – տեղական տնտեսական զարգացման պլան

ՀԿ – Հասարակական կազմակերպություն

# 4. Պլանի ներածություն

Վանաձոր համայնքը միացել է «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը 2017 թվականի մայիս ամսին:

Փաստաթղթի հիմքում դրված է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման տեսլականը: Այն հիմնականում կենտրոնացած է մասնավոր հատվածի զարգացման վրա՝ խթանելու համար տնտեսության աճը, զարգացումն ու բնակչության զբաղվածությունը:

Այն պարագայում, երբ համայնքի տնտեսությունը կարողանում է կատարել զարգացման նպատակով նախատեսված ծախսեր համայնքի ոլորտների վրա (զբոսաշրջություն, կրթություն, առողջապահություն, էկոլոգիա, ենթակառուցվացքներ և այլն), համայնքը զարգանում  է որպես մեկ համակարգ: Տնտեսությունը ստեղծելով հավելյալ արժեք, որը ծախսում է համայնքի զարգացման վրա, համայնքին հնարավորություն է ընձեռնվում ձեռնարկություններին ապահովել որակյալ աշխատուժով, ենթակառուցվածքներով, իսկ բնակչությանը նաև որակյալ ծառայություններով: Նախաձեռնությանը միանալով՝ համայնքն ակնկալում է տեղական տնտեսության զարգացման պլանի մշակմանն ուղղված փորձագիտական աջակցություն՝ կենսունակ նախագծերի ընտրման ու իրագործման նպատակով: Ինչպես նաև  մշակված պլանը հնարավորություն կտա հաջողությամբ իրականացնել  անհրաժեշտ ֆինանսական (մասնավորապես՝ դրամաշնորհային) ռեսուրսների հայթայթումը, գրավիչ դարձնել համայնքը ներքին և արտաքին ներդրողների համար:

Վանաձորը Լոռու մարզկենտրոնն է, գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում: Այն երկրի երրորդ քաղաքն է: Վանաձորն արդյունաբերական քաղաք է. խորհրդային միության ժամանակ ունեցել է զարգացած քիմիական արդյունաբերություն, որը ներկայումս չի գործում՝ ծանր հարված հասցնելով համայնքի տնտեսությանը և զբաղվածությանը; Վանաձորը նաև հայտի է եղել որպես մանկապատանեկան հանգստի վայր, որտեղ ամառային հանգիստն են անցկացրել Հայաստանի, Խորհրդային Միության այլ հանրապետությունների և սոցիալիստական ճամբարի երկրների դպրոցականները: Ներկայումս դինամիկ աճում է հագուստի արտադրությունը, որը աշխատում է եվրոպական շուկայի առաջատար բրենդերի հետ:

Քաղաքը զբաղեցնում է 2638 հեկտար մակերես Փամբակի և Բազումի լեռների հովտում: Հեռավորությունը Երևանից ավտոմոբիլային ճանապարհով 125 կմ է, երկաթգծով՝ 224 կմ: Քաղաքի զբաղեցրած մակերեսի հիմնական մասը ծովի մակերևույթից բարձր է

1353մ: Քաղաքի միջով անցնում են Փամբակ, Տանձուտ և Վանաձոր գետերը: Կլիման փափուկ է և մեղմ:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված չօգտագործվող հողերի ընդհանուր մակերեսը 239,2821հա է, որից ավելի քան 15 տոկոսի միջով անցնում է Հայաստան-Վրաստան երկաթգիծը և մոտ 61000 ք/մ շենքեր և շինություններ: 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ բնակչության թիվը կազմել է 77600 մարդ: Աշխատունակ բնակչության թիվը կազմում է 39264 մարդ, որոնցից 43,2% տղամարդիկ են և 56,8%-ը՝ կանայք: Պաշտոնական գործազրկության մակարդակը կազմում է 10,6%, իսկ իրական գործազրկությունը մոտ 30% է:

Վանաձորը տրանսպորտային հանգույց է. այստեղով են անցնում Երևան–Թբիլիսի երկաթգիծը, ինչպես նաև կարևորագույն միջպետական ավտոճանապարհներ: Համայնքի տնտեսության զարգացման հիմնական ուղին զբոսաշրջությունն է: Կանաչ բնությունը, մեղմ կլիման և խորհրդային տարիների առողջարանային և ճամբարային քաղաքի համբավի շնորհիվ Վանաձորը միշտ եղել է զբոսաշրջային կենտրոններից մեկը: Խորհրդային միության փլուզումից հետո, որոշակի ժամանակ քաղաքը դուրս էր մնացել զբոսաշրջային ուղիների ցանկից: Սակայն վերջին տարիներին ներդրված միջոցների, կառուցված ճանապարհների, հյուրանոցների, հյուրատների, վերանորոգված առողջարանային համալիրի շնորհիվ Վանաձորը վերականգնում է իր համբավը:

Համայնքի զարգացման գլխավոր գրավականն է նաև համայնքում գործող Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը, որի գործունեությունն ուղղված է համայնքի բնակչության զարգացումը ՏՏ ոլորտում;

Համայնքի զարգացման մյուս ուղղությունները դրանք թեթև արդյունաբերությունն է և փոքր ու միջին ձեռնարկատիրությունները:

Վանաձոր համայնքում վերջին տարիներին սկսել է մեծ թափով զարգանալ տնտեսությունը: Դրա վառ ապացույցն է նոր բացված գործարանները, (2 խոշոր սննդի արտադրության և վերամշակման), բացված սննդի սպասարկման կենտրոնները «KFC», «Տաշիր պիցա», մի շարք սրճարաններ, ռեստորաններ և արագ սննդի այլ օբյեկտներ: Բացվել են նաև հյուրանոցային համալիրներ, վերանորոգվել և նոր պոտենցիալով վերագործվել է «Արմենիա» առողջարանային կենտրոնը:

Ակտիվորեն զարգանում է մասնավոր հատվածը և ՓՄՁ-ները: Կարևոր է նաև Վանաձորի համայնքապետարանի և կառավարության կողմից իրականացվող ծրագրերը, որոնց շնորհիվ վերանորոգվել են համայնքի մի շարք փողոցներ, 4 այգիներ, կերպարվեստի թանգարանը: Նշված աշխատանքների իրականցման նպատակով համայնքի կողմից ներդրվել է շուրջ 500 մլն դրամ:

2020թ. կառուցվելու է 2 նոր այգի, հիմնանորգվելու է Շ. Ազնավուրի անվան այգին, մշակույթի տունը, սպորտ դպրոցը, գրադարանը, հիմնանորոգվելու է ռազմավարական նշանակության մեկ փողոց: Նշված աշխատանքների իրականցման նպատակով համայնքի կողմից ներդրվել է շուրջ 500 մլն դրամ:

ԵՄ ծրագրերով նախատեսված է արդիականացնել շրջակա միջավայրի բարելավման, աղբահանության և տրանսպորտային համակարգերը:

Վերոնշյալից հետևում է, որ Վանաձորը հստակ քայլերով գնում է դեպի զարգացում, ինչպես զբոսաշրջության, ենթակառուցվածքների, այնպես էլ տնտեսության ոլորտում:

Վանաձորի տնտեսական ներուժի գնահատումը ցույց է տալիս քաղաքի զարգացման թույլ և ուժեղ կողմերի, հնարավորությունների և վտանգների ընդհանուր պատկերը՝ բացահայտելով քաղաքային ենթակառուցվածքների բացերը և կարիքները՝ բարձրացնելով նրա գրավչությունը, մասնավորապես տնտեսության և տուրիզմի զարգացման համար: ՈՒժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների վերլուծությունը, հանգեցնում են հնարավոր գործողությունների բացահայտմանը: Հիմնվելով համայնքի տնտեսության վերլուծության վրա, ՏՏԶ պլանի նպատակն է զարգացնել համայնքի տնտեսությունը, ստեղծելով նոր աշխատատեղեր՝ խթանելով համայնքի տնտեսական և տուրիստական զարգացումը

# 5. Տեղական տնտեսական զարգացման պլանի մշակման գործընթացը

ՏՏԶ պլանի մշակման գործընթացն իրականացվել է 2 փուլով: Այն իրականացնելու համար ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ներգրավելով ՏԻՄ-ի, ՔՀԿ-ի, ՀԿ ների, ՏՏ ոլորտի ներկայացուցիչներ, տուրիզմի ոլորտի ներկայացուցիչներ, ավագանու անդամների, գործարարների: Աշխատանքները համակարգել է Վանաձոր համայնքի տնտեսական զարգացման պատասխանատուն:

Պլանի մշակման գործընթացի շրջանակում կազմակերպվել են թվով 5 քննարկումներ, Վանաձոր քաղաքում: Առաջարկություններ և գաղափարներ են ստացվել բնակիչներից, տեղական գործարարներից, ՀԿ ներկայացուցիչներից:

2-րդ փուլում կազմակերպվել է աշխատանքային հանդիպումներ՝ առցանց հարթակում: Աշխատանքները համակարգել է ՁԾ, ԱԿ և ՏՏ բաժի պետ Լ.Դավթյանը: Հանդիպումներին մասնակցել են ՏՏ, զբոսաշրջության, հասարակական կազմակերպությունների ոլորտի ներկյացուցիչեր: Մասնակիցների ցանկը ներկայացված է *հավելված 1-ում:*

Աշխատանքային մթնոլորտում ուրվագծվել են համայնքի տնտեսական զարգացման ռազմավարական խնդիրները, նպատակները: Մշակվել է պարբերաբար հանդիպումների ժամանակացույց:

# 6. Տեղական տնտեսության վերլուծություն

### 6.1 Տեղական տնտեսության կառուցվածքի վերլուծություն

Վանաձոր համայնքը Խորհրդային Միության տարիներին աչքի է ընկել խոշոր արդյունաբերական գործարաններով, կանաչ բնությամբ, առողջարաններով և մանկապատանեկանճամբարներով:

Ըստ ՀՀ պետական ռեգիստրի տվյալների համայնքում գրանցված է 2851 ձեռնարկություն: Համայնքում գործունեություն են ծավալում 21 ֆինանսական կազմակերպություններ, որոնցից 16 բանկային մասնաճյուղ, 5-ը՝ վարկային կազմակերպություն, Վանաձորի Տեղեկատվական Տեխնոլոգիաների կենտրոնը, և Լոռու մարզի Ներդրումների աջակցության գործակալությունը:

Վանաձորը Լոռու մարզի վարչական կենտրոնն է: Այստեղ են գտնվում մարզպետարանը և պետական կառույցների տարածաշրջանային ստորաբաժանումները:

Վանաձորի տնտեսական զարգացման գլխավոր խթան հանդիսացող կառույցն է Գլորիա կարի ֆաբրիկան, որն էլ ապահովում է հիմնական աշխատատեղերը:

Համայնքում գործող կազմակերպությունները ունեն հետևյալ բաշխվածությունն ըստ աղյուսակ 2-ի՝

- 1751 միկրո ձեռնարկություն
- 1047փոքր ձեռնարկություն
- 29 միջին ձեռնարկություն
- 3 խոշոր ձեռնարկություն

Չնայած համայնքի առաջ ծառացած մի շարք խնդիրների, Վանաձորը քայլեր է ձեռնարկում տնտեսությունը զարգացնելու համար, որին էլ նպաստում են ինչպես պետական, միջազգային և այլ կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերն, այնպես էլ մասնավոր ներդրումների հիման վրա իրականացվող ծրագրերը:

Խորհրդային Հայաստանում Վանաձորը զարգացել է որպես արդյունաբերական քաղաք, որտեղ առանցքային նշանակություն են ունեցել քիմիական և թեթև արդյունաբերությունը:

Միևնույն ժամանակ անտառապատ բնության շնորհիվ Վանաձորը եղել է երկրի առողջարանային և մանկապատանեկան ամառային հանգստի կենտրոններից մեկը: Վանաձորը հանդիսացել է նաև երկրի կարևոր բարձրագույն կրթական կենտրոններից մեկը՝ Երևանից և Գյումրիից հետո:

Համայնքում ներկայումս գործում են՝

- մեքենաշինական և սարքաշինական, քիմ.արդյունաբերական և կեցաղային քիմիական նույթերի արտադրության, քարի և փայտի վերամշակման, շինարարական նյութերի արտադրության թվով 35 ձեռնարկություն,
- թեթև արդյունաբերության, կոշիկի, կաշվե իրերի և հագուստի արտադրության թվով 11 ձեռնարկություն,
- 6 ՀԷԿ
- ոսկերչական զարդերի արտադրության և թանկարժեք, կիսաթանկարժեք քարեր վերամշակման թվով 3 ձեռնարկություն
- կաթի վերամշակման և կաթնամթերքի արտադրության, պահածոների, հացի և հացաբուլկեղենի, զովացուցիչ ըմպելիքի, թռչնամսի, մսամթերքի և սննդի այլ արտադրության թվով 25 ձեռնարկություն:

***Թեթև արդյունաբերություն***

Վերամշակող արդյունաբերության ոլորտն առաջատարն է և ապահովում է ամենամեծ զբաղվածությունը: Միայն Վանաձորի «Գլորիա» կարի ֆաբրիկայում աշխատում է ավելի քան 2500 մարդ, «Սարտոն»-ում՝ 564 մարդ, «Ավտոգեն»-ում 402 մարդ և այլն: Բացի խոշոր արտադրամասերը գործում են նաև մի քանի փոքր արտադրամասեր: Կարի

ֆաբրիկաները հիմնականում աշխատում են Եվրոպական երկրներից ստացած պատվերների հիման վրա:

***Սննդի վերամշակում***

Սննդի վերմշակման մեջ զգալի մաս է կազմում կաթնամթերքի, մրգերի և բանջարեղենի վերամշակումը: Վանաձորում արագ տեմպերով զարգանում է նաև կաթնամթերքի արտադրությունը: Խոշոր առաջատարներից են Դիետ, Մանուկ, Կաթնագործ ընկերությունները: Հիմնվում և զարգանում են նաև փոքր արտադրամասեր, որոնք զբաղվում են կաթի ամբողջական վերամշակմամբ: Համայնքի արտադրանքը մատակարարվում է ոչ միայն մարզում, այլև մարզի սահմաններից դուրս:

Զարգանում է նաև մրգերի և բանջարեղենի վերամշակման ոլորտը: Վերջին տարիներին կառուցվել է երկու խոշոր գործարան: Արտադրանքը արտահանվում է, սպառվում է նաև ներքին շուկայում:

***ՏՏ ոլորտ***

Երբեմնի արդյունաբերական քաղաք Վանաձորն այսօր որպես տնտեսության գերակա ուղղություն ընտրել է նոր տեխնոլոգիաների զարգացման ճանապարհը: Համայնքի տնտեսության մեջ մեծ դեր ունի Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը (ՎՏԿ): Այն ստեղծվել է Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամի, ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի կողմից 2016թ.:

ՎՏԿ-ի առաքելությունն է Վանաձորը վերածել տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների տարածաշրջանային և միջազգային կենտրոնի՝ ստեղծելով հնարավորությունների և ծառայությունների այնպիսի զարգացող միջավայր, որը կնպաստի աշխատատեղերի ստեղծմանը, կաջակցի տաղանդավոր երիտասարդներին և ընկերություններին կյանքի կոչել նորարար բիզնես գաղափարներ՝ նպաստելով տարածաշրջանի կայուն զարգացմանը:

Կենտրոնը տեխնոլոգիական ընկերություններին աջակցում է մի շարք ոլորտներում՝ այդ թվում տրամադրելով

- Մասնագիտական կարողությունների զարգացում
- բիզնեսի զարգացում
- ճարտարագիտություն և նախատիպերի պատրաստում
- կառավարվող աշխատանքային տարածք
- միջոցառումներ և համաժողովներ,

Տեխնոլոգիական կենտրոնում 2016-ից մինչ օրս կրթական ծրագրերին և հմտությունների զարգացման ծրագրերին մասնակցել են շուրջ 5100 մասնակից: Դասընթացներ դպրոցականների համար՝ 3500 աշակերտ, իրականացվել է նաև ուսուցիչների վերապատրաստում և դասագրքի մշակում: ՎՏԿ-ում գործում է Yandex Academy կրթական ծրագիրը, մասնակիցները 100 են, ճարտարագիտական առարկայի հատուկ դասընթացներին մասնակցել են 120 –ը, ծրագրավորման դասընթացների մասնակիցների թիվը 1500 է:

ՎՏԿ-ի գլխավոր առաքելություններից է նաև աջակցությունը բիզնեսի զարգացմանը, որի շրջանակներում աջակցություն ստացած թիմերի և կազմակերպությունների թիվը 150 է: Ներգրավված ընկերությունների թիվը 15, աշխատողների թիվը մոտ 170:

***Զբոսաշրջություն և առողջարանային գործունեություն***

Վանաձորի Արմենիա առողջարանը գտնվում է Վանաձոր քաղաքում (Լոռու մարզ), Երևանից 132 կմ դեպի հյուսիս: Տարածքը անտառապատված է, որտեղ կան խաղահրապարակներ, ամբողջ երկայնքով հոսում է Վանաձոր գետը, իսկ հարևանությամբ գտնվում է արհեստական լիճ, մարզական համալիր, ինչպես նաև եկեղեցի:

Բուժական կենտրոնում գործում է ցեխաբուժարան, (օգտագործվում է սեփական Ֆիոլետովո տորֆի հանքավայրը), ջրաբուժարան, որտեղ օգտագործվում է Լոռի հանքային ջուրը, ինչպես նաև ֆիզիոթերապևտիկ, աղեստամոքսային տրակտի հիվանդությունների և դիագնոստիկ բաժանմունքներ:

Գործում են մի քանի խոշոր հյուրանոցային համալիրներ, սակայն անհրաժեշտ է առանձնացնել նաև հյուրատները, որոնք զարգանում են մեծ թափով:

2016 թ-ից Վանաձորում ակտիվորեն զարգանում է նաև կենսակայուն/էկո տուրիզմը Վանաձորի կիրճից դեպի մայմեխ լեռ: Արդեն հիմնվել է Բու Այլընտրանքային Տուն կրթական կենտրոնը, իր հարակից քայլարշավային արահետներով և դրանց կից քարտեզներով, ինչպես նաև վրանային ճամբարի համար նախատեսված գույքով: Բու Այլ տունը մասնավորապես ծառայում է որպես կրթական կենտրոն համայնքային երիտասարդների համար, ինչպես նաև կենսակայուն տուրիզմի զարգացման կենտրոն, որտեղ կարելի է ծանոթանալ և ուսումնասիրել փամբակի լեռնաշխթայի կենսաբազմազանությունը:

2019թ.-ից հաստատվել և այժմ նախագծման փուլում է արդեն Վանաձորում լեռնահեծանվային սպորտի ստեղծման համար անհրաժեշտ ենթակառուվածքների ստեղծման ծրագիրը:

Վանաձորում արդեն երկու տարի է գործում են Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոն (Lori Tourism R&D Center) և Լոռու այցելուների տեղեկատվական կենտրոնը: Իր գործնեության ընթացքում կենտրոնը վեր է հանել Վանաձորի չբացահայտված կողմեր, Վանաձորը բնութագրելով որպես «Քաղաք, որտեղ անվերջ հնչում են ոռքն ու անձրևը»: Մշակել է քաղաքային մի քանի տուրեր, որոնցում հստակ երևում է քաղաքի տեսարժան վայրերը, հնարավոր է ծանոթանալ Լոռու մշակույթին, ուտեսներին և այլն: Մեծ հետաքրք րություն է ներկայացնում մշակված «Սովետական» տուրը: Ինչպես արդեն նշվել է Վանաձորը ինդուստրիալ քաղաք է եղել, և ներկայումս չգործող գործարանները ծառայում են, որպես ինդուստրիալ տուրիզմի կենտրոններ:

***Այլ ծառայությունների ոլորտ – վարչական, ֆինանսական, առողջապահական***

Քաղաքի զարգացման նպաստում է նաև մի շարք պետական կառույցները, բանկերը, ֆինանսական կառույցները, որոնք սպասարկում են ամբողջ մարզի տարածքը:

2018թ. շահագործման է հանձնվել Վանաձորի բժշկական կենտրոնը, որն իր հագեցվածությամբ միակն է մարզում՝ սպասարկելով ամբողջ մարզի բնակչությանը:

Վանաձորում ներկայումս կան մեծ քանակությամբ արդյունաբերական նշանակության տարածքներ, որոնցից շատերի միջով անցնում է երկաթգիծը: Նախկին բազմաթիվ առողջարաններից, հանգստյան տներից, շատ փոքր մասն է ներկայումս գործում: Գեղեցիկ բնությունը և մեղմ կլիման կարող են հնարավորություն ընձեռել վերոնշյալ առողջարաններին ու հանգստյան տներին՝ ամբողջ ուժով վերագործարկել, իսկ Հայաստանի դիրքն ու ներկայիս քաղաքական վիճակը (ԵԱՏՄ անդամակցություն, Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր) աննախադեպ առիթ են հանդիսանում Հայաստանը, ԵՄ և ԵԱՏՄ երկրների միջև կապող օղակ դարձնելու համար՝ օգտագործելով Վանաձորի իսկայական ներուժը:

Համայնքի տարածքում են գտնվում պատմամշակութային մեծ արժեք ունեցող բազմաթիվ կոթողներ՝ Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի, Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցի, Սուրբ Օհան եկեղեցի, Կոտրած եկեղեցի, Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատ, որն ընդգրկված է հուշարձանների ցանկում, Թագավորանիստ բրոնզեդարյան հնավայրը, որը 10-րդ դարում հանդիսացել է Բագրատունյաց Աշոտ 3-րդ Ողորմածի նստավայրը և այլն:

Վանաձորով անցնում է Հայաստան – Վրաստան հիմնական մայրուղին, որն այժմ հիմնանորոգվում է և, հիմնանորոգման արդյունքում՝ կդառնա ավելի լայն, առավել անվտանգ և հարմարավետ:

Համայնքում բացի նորակառույց «Վանաձորի Բժշկական Կենտրոն», ներկայումս գործում են 3 հիվանդանոցային բժշկական կազմակերպություններ, 11 արտահիվանդանոցային բժշկական կազմակերպություններ, մոտ 50 ստոմատոլոգիական կենտրոններ, բազմաթիվ դեղատներ և այլն:

Վանաձոր համայնքում կան 3 մշակույթի տուն, 2 կինոթատրոն, 3 թատրոն, 2 թանգարան և այլն, սակայն դրանք ունեն արդիականացման խիստ կարիք: Վանաձորը նաև հայտնի է իր մշակույթով: Այսօր երիտասարդության շրջանում մեծ համբավ են վայելում վանաձորյան ծագում ունեցող ռոք-խմբերը, ինչպիսիք են «Լավ էլին», «Որդան Կարմիրը» «Բամբիր» «Քլոքեր»: Նրանց մասնակցությամբ Վանաձորում անցկացվել են ռոք փառատոններ:

Համայնքում գործում են նաև հետևյալ ոլորտներ մի շարք փոքր և միջին կազմակերպություններ՝ հանրային ծառայությունների մատուցում, տրանսպորտային ծառայություններ, անշարժ գույքի գործակալություններ, շինարարական, քարի վերամշակման  և այլն:

Ամփոփելով՝ Վանաձորի տնտեսության առաջատար և զարգացման մեծ ներուժ ունեցող ոլորտներն են.

- թեթև արդյունաբերությունը,
- զբոսաշրջությունը, մասնավորապես, առողջարանային և մանկապատանեկան հանգստի կազմակերպումը
- Բարձր տեխնոլոգիաների ոլորտը
- և հանրային ծառայությունների ոլորտը:

## 6. 2 Տեղական համագործակցություն

Համայնքապետարանը պարբերաբար կազմակերպում է հանդիպումներ հասարակության հետ և քննարկումներ անցկացնում տարբեր տնտեսական ոլորտների խնդիրների և հնարավոր լուծումների մասին: Քննարկում ենք նաև համայնքային ծառայությունների բարելավման հետ կապված խնդիրները: Համայնքում տնտեսական զարգացման պլանի իրագործումը համակարգելու և իրագործումն ապահովելու համար պետք է ձևավորվի Վանաձորի տնտեսական զարգացման խորհուրդը, որի կազմում կներգրավվեն համայնքի տնտեսության առանցքային ոլորտների, զբոսաշրջության ոլորտի, տնտեսական զարգացմամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչները (Խորհրդի կազմի ցանկը ներկայացված է հավելված 2-ում:

Համայնքապետարանը մշտապես աշխատանքներ է տանում բարձրացնելու քաղաքացիներին և կազմակերպություններին մատուցվող ծառայությունների որակը՝ դրանք դարձնելով առավել հասանելի և թափանցիկ: Վերջին շրջանում մեծ թափով աշխատանքներ են կատարվում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայությունները դարձնելու էլեկտրոնային: Ձեռքբերում է նաև 2017թ.-ից գործող քաղաքացիների սպասարկման գրասենյակը, որտեղ քաղաքացիերին ծառայություններ մատուցվում է մեկ պատուհանի սկզբունքով: Համայնքին առնչվող և համայնքում տեղի ունեցող ցանկացած իրադարձություն լուսաբանվում է համայնքապետարանի լրատվության բաժնի կողմից ինչպես պաշտոնական կայքում /vanadzor.am, cmis.vanadzor.am/, այնպես էլ համայնքապետարանի ֆեյսբուքյան էջերում: Այս ամենի արդյունքում էապես բարձրացել է բնակչության վստահությունը տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ: Սա արտահայտվում է ինչպես բնակիչների կողմից ստացվող մի շարք առաջարկություններից և համայնքին առնչվող բազմաթիվ մտահոգություններ պարունակող նամակներից, այնպես էլ բնակիչների՝ համայնքում իրականացված փոփոխություններին և համայնքապետարանի կողմից կատարված աշխատանքների մասին արձագանքներից:

Տեղական համագործակցության ուղղությամբ կարևոր դերակատարություն ունի Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը, որը կապերի հաստատման միջոցառումների և ֆորումների ու քննարկումների միջոցով նպաստում է համայնքի բարձր տեխնոլոգիական ընկերությունների, կրթական հաստատությունների և այլ կառույցների միջև համագործակցության ձևավորմանը:

## 6.3 Բիզնեսին աջակցող, թափանցիկ և առանց կոռուպցիայի վարչարարություն

Համայնքի տնտեսական զարգացման խորհուրդը նոր է ձևավորվել և ձեռնարկությունների հետ համատեղ աշխատելու և տեղեկատվություն տրամադրելու փորձ չունի: Բացի համայնքապետարանի կողմից կազմակերպված հանդիպումներից, բիզնեսի կարիքներին ուղղված գործարար միջավայրի բարելավման նպատակով համագործակցության այլ ձևաչափ չկա: Բիզնեսի աջակցության կամ դոնոր ծրագրերի մասին տեղեկատվությունը չի տեղադրվում համայնքային պաշտոնական կայքում: Գործարար միջավայրի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում ստացած տեղեկատվության հիման վրա նախատեսվում է համայնքապետարանի պաշտոնական

կայքում ստեղծել տնտեսական զարգացմանն ուղղված, օգտակար ինֆոմացիա պարունակող բաժին, որը կներառի հնարավոր դրամաշնորհների հայտարարություններ, բիզնես պլանի ձևաչափեր սեմինարների հրավերներ՝ տարբեր թեմանարով և այլն: Համայնքապետարանի կողմից հայտարարվող բոլոր մրցույթները հրապարակվում են կայքում և շահագրգիռ բոլոր կողմերը կարող են մասնակցել գնառաջարկների բացմանը: Համայնքում ստեղծվել է բավարար պայմաններ իրազեկ լինելու համայնքային ժողովների և հանրային քննարկումների մասին, մասնակցելու և ներկայացնելու առաջարկներ: Այդ նպատակով օգտագործվում է համայնքային պաշտոնական կայքը, ֆեյսբուքյան էջը, որտեղ մանրամասն անդրադարձ է կատարվում համայնքապետարանի և խորհրդի կատարած աշխատանքներին: Համայնքի բոլոր ավագանու նիստերը առցանց հեռարձակվում են:

Ստորև աղյուսակը ներկայացնում է տնտեսական ոլորտներում առկա հիմնական խնդիրները, որոնք բացահայտվել են պլանի մշակման ընթացքում իրականացված խորհրդակցությունների արդյունքում գործարար միջավայրի ներկայացուցիչների հետ:

**Աղյուսակ 1. Զարգացող ոլորտները (ենթաոլորտները) և դրանց խնդիրները**

| **(Զարգացող) Ոլորտ (ենթաոլորտ)** | **Հիմնական խնդիրները, որոնց լուծման համար անհրաժեշտ է աջակցությունտրամադրել բիզնեսին** |
|---|---|
| Զբոսաշրջության ոլորտ | Հյուրանոցների և հյուրատների սակավ թիվ,<br>Աղբահանության ոչ բավարար մակարդակ<br>Ճանապարհային ուղղորդիչ նշանների բացակայություն<br>Հիմնական զբոսաշրջային վայրեր տանող ճանապարհների վատ որակ<br>Փողոցային լուսավորության վատ որակ<br>Համայնքի զբոսաշրջային քարտեզների բացակայություն |
| Շինարարություն | Քաղաքի զարգացման գլխավոր հատակագծի համապատասխանեցում տնտեսության զարգացման պահանջներին<br>Քաղաքի ճարտարապետական տեսքի ոչ պատշաճ պահպանում<br>Շինարարական թույլտվությունների գործընթացի հստակեցում, ժամկետների կրճատում |
| Բոլոր գործարար ոլորտներ | Իրավական կարգավորումների վերաբերյալ բիզնեսի ոչ պատշաճ տեղեկացվածությունը |

### 6.4 Ֆինանսական միջոցների հասանելիություն

Համայնքում առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների, ինչպես նաև ներդրումների աջակցման կենտրոնի առկայությունը տեղի բիզնեսին մղում է դեպի նոր գործառնությունների, խթանում է նոր բիզնեսների ստեղծման: Բանկային համակարգում դեռևս առկա բարձր տոկոսների պատճառով ստանում ենք հակառակ արդյունքը: Սակայն Կառավարության մշակած նոր քաղաքականության արդյունքում ներկայումս

հնարավոր է իրականացնել բիզնես ծրագրեր ավելի ցածր տոկոսներով՝ ստանալով նաև կառավարության կողմից սուբսիդավորում:Համայնքում գործում են 16 առևտրային բանկերի մասնաճյուղեր 5 վարկային կազմակերպությունների մասնաճյուղերը և 1 ՓՄՁ ԶԱԿ:

Բիզնեսի զարգացման համար առկա ֆինանսական ռեսուրսների մասին տեղեկատվությունը չի հավաքագրվում և տրամադրվում բիզնեսներին: Համայնքում գործող բանկերը տրամադրում են վարկեր փոքր և միջին ձեռնարկություններին մինչև 500 մլն դրամ (9-15%) գրավով և 10մլն. դրամ (21%) առանց գրավի: Առևտրային բանկերը գյուղատնտեսության զարգացմանը խթանելու նպատակով տրամադրում են գյուղատնտեսական վարկեր 5-6% տոկոսադրույքով: Համայնքում կան գործող վարկային կազմակերպություններ, որոնք տրամադրում են վարկեր մինչև 2 մլն.դրամ (տարեկան 24% տոկոսադրույքով): 2020թ. նախարարությունները վարկեր են տրամադրում փոքր ու միջին բիզնեսներին առանց տոկոսների, որոշ դեպքերում նաև ապահովելով գրանտային տարբերակներ: Կան մի շարք կազմակերպություններ, որոնք աջակցում են փոքր և միջին ձեռնարկություններին: Բիզնեսի զարգացմանը նպաստելու համար համայնքային խորհուրդը նախատեսում է համայնքապետարանի համագործակցություն կապիտալ շուկայի հետ, կարողությունների զարգացում և ծրագրերի և աշխատանքների համատեղ իրականացում մասնավոր ոլորտի հետ, ինչը կապահովի ֆինանսական շուկա այդ ծրագրերի իրականացման համար:

2020-2023 թվականների ընթացքում ԵՄ ֆինանսավորմամբ Հայաստանի հյուսիսային երեք մարզերում, ներառյալ Լոռին, իրականացվելու է 2 մասշտաբային նախագիծ, որոնց նպատակն է խթանել մասնավոր հատվածի զարգացումը ագրոբիզնեսի, զբոսաշրջության և բարձր տեխնոլոգիաների ոլորտում: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում եմ դրամաշնորհներ նշված ոլորտների նորարարական բիզնես գաղափարների համար: Քաղաքապետարանը կփորձի ակտիվ համագործակցել այդ ծրագրերի հետ, որպեսզի համագործակցության հնարավորությունները և դրամաշնորհների մասին տեղեկատվությունը հասանելի լինի համայնքի բիզնեսին:

### 6.5 Հող և ենթակառուցվածքներ

Բիզնեսի զարգացման դրական միտումն իր հետ բերում է նաև աշխատանքային տարածքի, հողի և ենթակառուցվածքների պահանջի աճ, սակայն վերոգրյալը այժմ իրենից խնդիր չի ներկայացնում, քանի որ առկա է 1552,26 հա համայնքապատկան հող: Համայնքն ունի նաև գրասենյակային տարածքներ, որտեղ տեղակայված են կազմակերպություններ, որոնք տրամադրում են հաշվապահական, իրավաբանական, խորհրդատվական և այլ ծառայություններ: Դրանցից մոտ 70% ունի վերանորոգման և կոմունալ ենթակառուցվածքների լուրջ բարելավման կարիք: Այս տարածքները հասանելի են հիմնականում փոքր ձեռնարկություններին: Միկրո ձեռնարկությունները շատ հաճախ չունեն համապատասխան ֆինանսական միջոցներ, տարածքների վարձակալության համար: «Վանաձորի Տեխնոլոգիական Կենտրոն»-ը տարբեր պայմաններով տարածքներ է տրամադրում՝ այնտեղ գործունեություն ծավալելու համար: Տեխնոլոգիական կենտրոնը համապատասխանում է արդի պայմաններին և հագեցած է անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և այլ հարմարություններով:

Համայնքը չունի ազատ տարածքների և շինությունների ցուցակ համապատասխան նկարագրություններով, որը կարող է ներկայացվել գործող բիզնեսին և ներդրողներին, սակայն այս առաջարկը քննարկման փուլում է: Ներկայումս մշակվում է և քարտեզագրվում է համայնքում առկա տարածքների և շինությունների ցանկը, որն էլ մոտ ապագայում կներկայացվի շահագրգիռ անձանց:

### 6.6 Կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակ

Համայնքապետարանում ստեղծվել է քաղաքացիների սպասարկման գրասենյակ, ինչի արդյունքում բարելավվել են համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայությունները: Չնայած արձանագրված առաջընթացին դեռևս կան որոշ խոչընդոտներ: Քսգ-ներում մատուցվում են նաև պետական ծառայություններ, օրինակ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեյի մի շարք գործառույթներ, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործառույթներ, Մեկ պատուհանի սկզբունքով մատուցվող վերոնշյալ ծառայությունները կօգնեն նաև բիզնեսների գրանցմանը:

Բիզնեսի խթանման մեխանիզմներ չկան. նոր ձևավորվող բիզնեսի զարգացմանը խթանելու համար համայնքի կողմից չի կիրառվում գանձվող տեղական հարկերի, տուրքերի և վճարների նվազեցում:

Տեղական տուրքերի վճարումը հնարավոր է իրականացնել ինչպես տեղում, այնպես էլ բանկերում կամ տերմինալներում:Ներկայումս քննարկումներ են կատարվում վարձավճարների մուծման պրոցեսը առցանց կատարելու: Գովազդի թույտվությունները տրամադրվում են դիմում-հայտի հիման վրա, անհրաժեշտության դեպքում, էսքիզային նախագծի առկայությամբ, մինչև 10 օր ժամկետում: Մանրածախ փողոցային առևտուրը բավականին դյուր ընթացակարգ ունի՝ այն կազմակերպվում է դրա համար նախատեսված վայրերում՝ ավագանու կողմից հաստատված 1քմ. 350 դրամով, դիմում ներկայացնել չի պահանջվում՝ տեղ հատկացնելու համար, պարզապես տեղադրվում է ապրանքը համապատասխան վայրում, և համայնքապետարանի համապատասխան աշխատակիցները ամենօրյա շրջայցի արդյունքում հավաքագրում են թե գումարները, և թե տվյալները: Վերոգրյալը, իհարկե, մտահոգվելու տեղիք է տալիս տարբեր պատճառներով:Շատ կարևոր է կարգավորել այս համակարգը, որի միակ լուծումը գյուղատնտեսական շուկայի կամ մեծ առևտրի կենտրոնների բացումն է, որի համար անհրաժեշտ են տարածքներ և ներդրումներ:

Կարգավորման փուլում է համայնքի կողմից շինարարության թույլտվության տրամադրումը և հողերի կատեգորիաների և գործառնական նշանակության փոփոխություններ կատարելը: Ներկայումս այն տրամադրվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն նախատեսվում է այն նվազեցնել մինչև 3 աշխատանքային օր: Նոր ձևավորվող բիզնեսի զարգացմանը խթանելու համար համայնքի կողմից չի կիրառվում գանձվող տեղական հարկերի, տուրքերի և վճարների նվազեցում:

### 6.7 Հմտություններ և մարդկային կապիտալ, ներառականություն

Հայաստանի օրենսդրության համաձայն համայնքապետարանի իրավասությունը կրթության բնագավառում սահմանափակվում է նախադպրոցական կրթությամբ: Սակայն Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը հաճախ կազմակերպում և կազմակերպել է SS ոլորտի դասընթացներ, հեքեթոններ, հմտությունների զարգացման

սեմինարներ և այլն: Բացի տեխնոպարկից, կան նաև մի քանի ավելի փոքր նորաստեղծ կազմակերպություններ, որոնք նույնպես կազմակերպում են ծրագրավորման դասընթացներ՝ այդ ոլորտում մարդկային ռեսուրսի ստեղծման և ավելացման նպատակով:

